Հրապարակն Էթեմէյտանի որ սեանկար իմն զետ կուսէ սպիտակ որմոց արքունի պալատանն երևի, վկայ արձանացեալ կայ մեծագունին 'ի գործս Թագաւորութեան Մահմուտի, բարձման սահմ Ենիչերեաց։ Այս ձեռնարկութիւն նորա՝ որ միայն կարէր վերսին ածել 'ի կենդանութիւն զարքայութիւնն մեծ, ոչ այլ ինչ ընծայեաց առաջի՝ բայց արիւնռուշտ և աղիտաբեր սեսարանս, որպիսի ինչ չիք նշմարել ուրեք 'ի սարեգիրս այլոց պետութեանց, որ՝ 'ի հետս գնդակաց գրոշմեալ կայ և հրկիզութեանց զաւերածովք անդ յիշատակարանացն Էթեմէյտանի։ Մահմուտ մեծ իմն քաղաքագիտութեամբ պատրաստեաց զայն, և քաջութեամբ՝ արժանաւոր առն գիւցազնի, էած զայն 'ի գլուխ։ Դէպք ինչ զյետին զայս 'ի վեր երևեցոյց վարանջութիւն։

Սպայ ոմն եգիպտացի եհար զոմն 'ի զօրուէ անտի սահմկաց. տապալեցին անդէն Ենիչերիք ըզկամեսայս իւրեանց։ Թագաւորն որ քաջածանօթ և կազմ էր առ ամենայն, կայր յայնժամ 'ի խորհրդեան 'ի բուրստանս Պէշիքթաշու՝ որ 'ի վերայ Վոսփորի։ Աճապարեաց դարձաւ յարքունիս, և էառ զնուիրական դրօշն Մահմէտի. Միւֆդին և Իւլէմայք՝ զնովաւ ժողովեալ, սահմանեն բնաջինջ կորուսանել զԵնիչերիս. զօրականք կանոնաւոր գնդից, և հաւատարիմք 'ի Մահմէտականաց անտի, 'ի զէն վառեալ գումարին ժողովին 'ի ձայն սուլգանին. ինքն իսկ արքայ յերիվար աշտանակեալ, ընթանայ զօրավարել բանակին։ Ենիչերիք համախումբ ժողովեալք 'ի հրապարակն Էթեմէյտանի՝ և ակն ածեն 'ի նմանէ. հատանէ անցանէ նա բազում անգամ զբազմամբոխ գունդս նոցա միայնակ, 'ի մէջ բիւր մահուանց, քաջալերեալ վեհագոյն իմն զօրութեամբ զոր ազդել սովոր է սիրական ինչ առաջադրութիւն մտաց։

Օրս այս՝ կամ յետինն պարտ էր լինել կենաց նորա և կամ սկիզբն տաղտութեանց նորա և իշխանութեան։ Ենիչերիք անսասք 'ի ձայն հրամանաց նորա՝ չառնուն յանձն կալ ընդ իւրեանց սպայիւք. և խուժեալ ժողովեցան յամենայն կողմանց մայրաքաղաքին արք իբր չորեք հազար։ Հաւատարիմ զօրականք սուլգանին, թնդանօթաձիգքն և Պոսանճիք, սիրեն անցին մերձակայ Ճանապարհի Ձիարձակարանին։ Հրաման ետ արքայ արձակել զհուր, և զօրականքն կային մնային տարակուսեալք. անդէն ոպայ ոմն աներկիւղ մերձենայ 'ի մի 'ի թնդանօթից անտի՝ և զատրճանակ իւր արձակէ 'ի բերան նորա, և ահա ընդ հրաձայթ ոմբոնն յերկիր կործանի առաջին դաս զօրուն Ենիչերեաց։ Յետս ընդ կրունկն ընկրկին նոքա, և բնակարանք նոցա հրակեզ լինին, անթիւ բազմութիւն նոցա՝ յանձուկ վայրի անդ փակեալ, կորնչի ընդ փլատակաք որմոցն։ Արք իբր հարիւր և քսան հազար 'ի մայրաքաղաքին ելեալ՝ 'ի սուր սուսերի կորեան, 'ի զոհ կատաղութեան խուժանին և սուլգանին. ջուրք Վոսփորի ածեալ ամացին զդիակունս նոցա 'ի ծովն Մարմարայ, և որ կենդանիք 'ի նոցանէ մնացեալ էին, 'ի փոքրն Ասիա տարագիր եղեն։ Զայսօրինակ զերծանէր Թագաւորութիւն։

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

### Պուքրէշ։

Վալաքիոյ իշխանութեան գլխաւոր քաղաքն է Պուքրէշ, ընդարձակ և քարեբեր դաշտի մը վրայ շինուած։ Ինչպէս արևելքի շատ քաղաքները, սասնկալ Պուքրէշ, թէ որ մնադրութեան արժանի բան մը ունի՝ իր արտաքին տեսքն է, բլուրներն ու անտառները որոնցմով բնութիւնը զարդարած է զինքը։ Բաց 'ի քանի մը փառաւոր շէնքերէն, բոլոր քաղաքը աղիւսով և անարուեստ Ճարտարապետութեամբ շինուած տնակներով ձեւացած է։

Շէնքերուն մէջ նշանաւոր կը համարուին՝ Հոսբոտարին կամ Վալաքիոյ իշխանին պալատը, և անոր մօտ եղող մետրապոլտական եկեղեցին, որոնց երկուքն ալ քաղքին կեդրոնին մէջ կը սեպուին, մեծ հրապարակին վրայ շինուած ըլլալով։ Այր եկեղեցիին զատ՝ ուրիշ վաթսուն եկեղեցիք ալ կը համարուին, բոլորն ալ յունադաւան Արևելեայց, որոնք Պուքրէշի բնակչաց մեծ մասն են։ Նացած շէնքերն են մեծ վաճառանոց մը, մէյմէկ եկեղեցի լատինացւոց և լուտերական նորաղանդից, հրէից ժողովարան մը և Աստրիոյ դեսպանին պալատը, որ թերևս քաղքին մէջ ամենէն գեղեցիկ շէնքն է, եւրոպական նոր ախորժակով և Ճարտարապետութեամբ շինուած։

Քաղաքին մէջն է հրեղէն կոչուած աշտարակը, ուսկից բոլոր քաղաքը կը տեսնուի։ Հոն մերձաւոր շէնքի մը մէջ ատենով յոյն տղոց վարժատուն մը կար, որ հիմա վերցուած է։ Պատերազմաց և քաղաքական խռովութեանց պատճառաւ՝ բնակչաց թիւը մեծապէս նուազած է, և հիմա հազիւ 106,000 հոգի կը համրուին։ Վարտարութեան մէջ առանց նշանաւոր քաղաք մը սեպուելու՝ ունի իր քանի մը գործարանները, մանաւանդ չուխայի ու գորգի։ Այս նաև հասարակաց մատենադարան

մը, թատր մը ու հինգ տպարան։ Ի՛ եր աղգէն ալ 2000 հոգւոյ չափ կը գրտնուին, ու եկեղեցի մը ունին Ս. Հրեշտակապետ կոչուած, և մեծապատիւ Ի՛խսաք ամիրայէն հաստատուած վարժարան մը։

Եւրոպայի մերձաւոր ըլլալով, ասիական քաղաքաց մէջ առաջին կը սեպուի Պուքրէշ, ուր արևմտեան քաղաքակրթութիւնը սկսեր է մտնել. "Հոս, կ'ըսէ Պալպի, արևելեան և արևմտեան սովորութիւք իրարու հետ կը միանան,,։

Յամանակակից պատմութեան մէջ նշանաւոր է Պուքրէշի խաղաղութիւնը, որ 1812 մայիսի 22ին Օսմանեանց և Ռուսաց մէջ հաստատուեցաւ։ Ղեքսանդր Ա կայսրը՝ մեծն Նապոլէոնի զօրանալուն ժամանակ անոր ահաւոր ուժէն վախնալով, ուզեց Ցաշ կի դրան հետ ունեցած տարաձայնութիւնը խափանել, և այս վախճանաւ Պուքրէշի խաղաղութիւնը եղաւ, յորում հետագայ պայմանները դրուեցան։ Ռուսք Ի՛ոլտաւիոյ և Վալաքիոյ իշխանութիւնքը ետ տուին. սակայն իրենց ձեռքը մնաց Ի՛ոլտաւիոյ երրորդ մասը ու բոլոր Պեսարապիան, ու Ի՛քերմանի, Պէնտէրի և Ռամայիլի բերդերը։ Յահմանուեցաւ որ անկէ ետքը Ռուսիէն ինչուան Դանուբի բերանը, կամ նոյն գետին ձախակողմեան ափունքը ինչուան Վարնա երկու պետութեանց սահմանածայրը սեպուի. իսկ Ասիոյ կողմէն հին սահմանը պահուեցաւ։ Այս դաշնադրութիւնը մեծապէս մեսասակար եղաւ Դաղղիացւոց. վասն զի Ռուսք Ի՛ոլտաւիայէն ու Վալաքիայէն քաշուելով՝ մէկէն պատերազմի տեղը հասան Ռերեզինայի անցքը, որ այնչափ դժնդակ և աղիտալից եղաւ Նաբոլէոնեան բանակին։

Դրած պատկերնուս մէջ երևցածը՝ հայկազն Ի՛իրզայեան Ի՛անուկ պէյին կանգնած կարաւանատունն է, այս դարուս սկիզբները շինուած. բայց ետքէն այրեցաւ։



*Կարաւանատուն ի Պուքրէշ.*